ԱՊԱԳԱ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՆՑՆՈՒՄ Է ԱՀ N 1 ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Փետրվարի 6-ից «Իրավագիտություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողները ևս անցնում են ուսումնական փորձուսուցում:

Փորձուսուցումն անցնում է ԱՀ N 1 նոտարական գրասենյակում (փորձուսուցման ղեկավար՝ Ա. Գրիգորյան):

Իրավունքի ամբիոնի վարիչ, տ.գ.թ. Տաթև Գևորգյանի խոսքով՝ այս փուլում ուսանողները ծանոթանում են գրասենյակի գործունեության բնույթին, անհրաժեշտ բոլոր փաստաթղթերին, տեղում ստանում պարզաբանումներ առաջացած հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կատարում փորձուսուցման ղեկավարի կողմից տրվող տարբեր առաջադրանքներ՝ գիտելիքները պրակտիկ ոլորտում ամրապնդելու նպատակով:

ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՆՑՆՈՒՄ Է ԲՆԱԿԱՆ ՀՈՒՆՈՎ

Տնտեսագիտության ֆակուլտետի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի ուսանողների փորձուսուցումը նախատեսված է անցկացնել ԱՀ Ազգային վիճակագրական ծառայությունում, Արցախի ներդրումային հիմնադրամում, «Արցախբանկ» ՓԲԸ-ում և այլ կազմակերպություններում: Մինչ այժմ փորձուսուցման շրջանակում ֆակուլտետի «Զբոսաշրջություն» 4-րդ կուրսի ուսանողները փորձուսուցում են անցել «Եվրոպա» հյուրանոցային համալիրում (փորձուսուցման ղեկավար՝ Ա. Սիմոնյան), «Կառավարում» 4-րդ կուրսի ուսանողները՝ ԱՀ ՊԵԿ-ում (փորձուսուցման ղեկավար՝ Ա. Գասպարյան):

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանի խոսքով՝ փորձուսուցումն անցնում է կազմակերպված, փորձուսուցման անմիջական ղեկավարների մասնակցությամբ ու վերահսկողությամբ:

«Այս փուլում դեռևս ընթանում է փորձուսուցման ուսումնական փուլը, ուսանողները տեղում ծանոթանում են կազմակերպությունների կանոնակարգային դրույթներին, գործունեության պայմաններին, մասնագետները ներկայացնում են ընդհանուր գործունեությունը, որից հետո արդեն կանցնեն արտադրական փորձուսուցման: էական խնդիրներ չեն արձանագրվել, փորձուսուցումն ընթանում է ըստ նախապես հաստատված պլանի»,-նշել է Ռ. Մանգասարյանը:

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Անժելա Շահանց, լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 1
ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ
2023

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Արցախի պետական համալսարանի ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը փետրվարի 3-ին հանդիպել է հեռակա ուսուցման համակարգի մի խումբ ուսանողների հետ և պարգևատրել նրանց՝ հասարակական ակտիվության ու պատշաճ վարքագծի համար:

Արցախի շարունակվող շրջափակման պայմաններում ստեղծված մի շարք կենսական խնդիրներին զուգահեռ Արցախի դեմ տարվում է նաև տեղեկատվական-հոգեբանական պատերազմ. այս ամենի վերջնանպատակը էթնիկ զտումը և Արցախը հայաթափելն է: Պրոռեկտորը ուսանողների հետ հանդիպման ընթացքում, ներկայացնելով տեղեկատվական- հոգեբանական պատերազմի էությունը, մեթոդներն ու նպատակները, հորդորեց չտրվել սադրանքներին, ստուգել ստացած տեղեկատվությունը, հապճեպ տեսակետներ չձևավորել և տեղեկատվություն ստանալու հարցում լինել հետևողական՝ պահպանելով զգոնություն:

«Արցախը հայկական պահելը մեզնից յուրաքանչյուրից է կախված: Ես հավատում եմ, որ Արցախը մնալու է հայկական: Սա ոչ միայն Արցախը հայկական պահելու պայքար է, այլ նաև՝ քաղաքակրթության: Մեր հաղթաթուղթը մեր միասնականությունն է, նպատակային մեզ փորձում են տարանջատել, թուլացնել, չպիտի տրվել այդ սադրանքներին»,-նշել է Վ.Յարամիշյանը:

Խոսելով կրթական բնագավառից՝ նա անդրադարձել է ուսանողներին հետաքրքրող հարցերին: Հեռակա ուսուցման համակարգի առանձնահատկություններից պրոռեկտորը որպես առավելություն ընդգծել է պրակտիկ դաշտում մասնագիտական գործունեություն ծավալելու հնարավորությունը, ինչը, տեսականի հետ համադրելով, նպաստում է մասնագիտական կայացմանը:

Հանդիպման ավարտին պրոռեկտորը ուսանողներին խրախուսել է գրքերով:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՆ ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Պատմություն» 4-րդ կուրսի ուսանողները փորձուսուցում են անցնում Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան համար 2 հիմնական դպրոցում (փորձուսուցման ղեկավար՝ Վ. Սաֆարյան):

Փորձուսուցման շրջանակներում ուսանողներն աշակերտների համար կազմակերպել են խաղ-մրցույթ՝ նվիրված Արցախյան շարժման 35-ամյակին:

Խաղ-մրցույթի կազմակերպիչներից ուսանողուհի Իզաբելլա Սարգսյանի խոսքով՝ ծրագիրը հաջողված էր, իսկ աշակերտները մեծ ոգևորությամբ էին խաղում՝ ցուցաբերելով գոհացուցիչ արդյունքներ:

ԱՄՓՈՓՎԵՑ «ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՅՈՒՄԸ

Ամփոփվեց բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի «Լրագրություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսումնական փորձուսուցումը, որը մեկնարկել էր փետրվարի 6-ից և տևել մինչև փետրվարի 17-ը:

Շրջափակման պայմաններում հնարավորինս հաղթահարելով ստեղծված խնդիրները՝ փորձուսուցման շրջանակում (փորձուսուցման ղեկավար՝ Զ.Սառաջյան) ուսանողներն այցելել են Արցախի Հանրապետությունում գործող ՁԼՄ-ներ, մասնավորապես՝ Արցախի հանրային հեռուստառադիոընկերություն, «Ազատ Արցախ» հանրապետական թերթի, «Ապառաժ» թերթի խմբագրություններ, «Artsakhpress.am» լրատվական գործակալություն, «Հայկ» մեդիայի Արցախի գրասենյակ և մի շարք գերատեսչությունների տեղեկատվության բաժիններ, հանդիպումներ ունեցել ՁԼՄ-ների պատասխանատուների հետ, ծանոթացել ՁԼՄ-ների կողմից իրականացվող տեղեկատվական քաղաքականությանը, աշխատակազմին, ընդհանուր գործունեությանն ու առանձնահատկություններին:

Երկու շաբաթ տևողությամբ փորձուսուցման ընթացքում ուսանողները լսել են արդիական թեմաների վերաբերյալ դասախոսություններ, մասնակցել վարպետության դասերի, քննարկումների, որոնք վարել են Արցախի Հանրային հեռուստառադիոընկերության տնօրեն Հրայր Ավետիսյանը, Արցախի հանրային ռադիոյի տնօրեն Տաթև Միրզոյանը, ԱՀՀ «Օր» լրատվական ծրագրի գլխավոր խմբագիր Նորայր Հովսեփյանը, «Ազատ Արցախ» թերթի խմբագիր Նորեկ Գասպարյանը, խմբագրի տեղակալ Վան Նովիկովը, «Ապառաժ» թերթի խմբագիր Արա Պուլուզյանը, «Հայկ» մեդիայի արցախյան գրասենյակի տնօրեն Սերգեյ Սաֆարյանը և մի շարք գերատեսչությունների տեղեկատվական բաժինների պատասխանատուներ:

Ուսանողները ՁԼՄ-ների անմիջական պատասխանատուներից ստացել են իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, ստացել մասնագիտական աջակցության առաջարկ՝ համագործակցելու և իրենց գիտելիքները գործնականում կիրառելու համար:

Ուսումնական փորձուսուցմանը կհաջորդի արտադրական փորձուսուցման փուլը (փորձուսուցման ղեկավարներ՝ Ս. Բալայան և Զ. Սառաջյան), որի ընթացքում ուսանողներն իրենց լրագրողական նյութերով հանդես կգան տարբեր ՁԼՄ-ներում:

Փորձուսուցման ղեկավար Զ. Սառաջյանը շնորհակալություն է հայտնել ՁԼՄ-ների պատասխանատուներին՝ արդյունավետ համագործակցության և փորձուսուցման անցկացմանը նպաստելու համար՝ կարևորելով նրանց դերը հատկապես ուսանողների մասնագիտական կարողություններն ու հմտությունները զարգացնելու և գործնականում դրսևորելու հարթակ տրամադրելու տեսանկյունից:

ՎԱՆԴԱԼԻԶՄ, ՈՐՆ ԱՐԺԱՆԻ Է ՊԱՐՍԱՎԱՆՔԻ



Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղն ըստ որոշ պատմագիտական աղբյուրների՝ գոյություն ուներ դեռևս նախաքրիստոնեական շրջանում: Հենց անվանումն էլ կապված է երկրամասում քրիստոնեության տարածման գործընթացի հետ: Թեպետ խորհրդային ժամանակաշրջանում բնակավայրը զուգահեռաբար կոչվում էր Չանախչի, սակայն ինքնին այդ անվանումն ունի հայկական ծագումնաբանություն, որովհետև հայերենում «չանախ» նշանակում է լայն բերանով ափսե: Ավետարանոցը ժամանակին մելիքանիստ գյուղ է եղել, որի մասին բազում վկայություններ կան հայ և օտարազգի պատմաբանների ու հետազոտողների գիտական ուսումնասիրություններում: 2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով Ավետարանոցը գերեվարվեց ազերիների կողմից, իսկ գյուղի բնակիչները՝ շուրջ 1235 հոգի, բռնատեղահանվեցին: Ներկայումս ավետարանոցցիները ժամանակավորապես բնակվում են Արցախի և ՀՀ-ի տարբեր բնակավայրերում:

Քառասունչորսօրյա պատերազմի ընթացքում հակառակորդի դեմ մղված մարտական գործողություններին մասնակցում էին նաև Ավետարանոց գյուղի ինքնապաշտպանական ջոկատի անդամները: Ինչպես նախորդ դարի 90-ական թվականների պատերազմի ժամանակ, այս ազատագրական մարտերում էլ եղան զոհեր: Ահա այդ հերոսացած անունները՝ Մավրիկ Վասիլիի Մայիլյան, Արամ Մելսիկի Բաբայան, Մհեր Տիմոֆեյի Բաղդասարյան, Գևորգ Մուրադի Համբարձումյան, Գագիկ Հենրիխի Պետրոսյան, Գուրգեն Գառնիկի Մնացականյան, Վրեժ Ռաշիդի Բալայան, Արմենակ Սմբատի Մադաթյան: Թուրք-ադրբեջանական զինված կազմավորումների կողմից գյուղը բռնազավթվեց 2020-ի հոկտեմբերի 27-ին: Բնակիչներն իրենց հետ ոչինչ դուրս տանել չհասցրին, զանգվածային հրետակոծման տակ լքեցին իրենց օջախները: Տարհանման ընթացքում, առաջացած խուճապի հետևանքով, վեց հոգի չհասցրին նախքան ներխուժումը դուրս գալ գյուղից: Նրանք հինականում թոշակառուներ էին, որոնք ուներին առողջական խնդիրներ: Դա չխանգարեց հրոսակներին՝ անմարդակային ձևով հաշվեհարդար տեսնելու անմեղ մարդկանց հետ: Տեղի ունեցան մարդու հիմնարար իրավունքների այնպիսի կոպտագույն խախտումներ, ինչպիսիք են ռասայական խտրականության շարժառիթով դիտավորյալ կյանքից զրկելը, կտտանքների ենթարկելով՝ անզեն մարդկանց գերեվարելը, ուրիշի ունեցվածքը ոչնչացնելն ու անխնա թալանելը: Սահմռկեցուցիչ էր Ավետարանոց գյուղի բնակիչ Բորիս Բաղդասարյանի նկատմամբ իրականացված ոճիրը: Անգթորեն գլխատելով կենդանի մարդուն, ազերիները նրա խոշտանգված մարմինը թողել են գյուղամիջում ընկած, իսկ գլուխը տարել՝ իրենց ժողովրդին ցուցադրելու: Հրոսակները գերեվարել էին վեց խաղաղ բնակչի՝ դաժան կտտանքների ենթարկելով: Հետագայում՝ Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից համատեղ ընդունված հայտարարությունից հետո երեք գերիների ու մեկ հոգու մահացած մարմինը վերադարձվել է հայկական կողմին, իսկ երկու հոգու ճակատագիր առ այսօր անհայտ է: Սեդրակ Բալասանի Պետրոսյան, Արեգա Թավադի Շահգելդյան, Վալերի Պողոսյան, Էդուարդ Աբգարի Շահգելդյան (մահացած), Կարեն Սեդրակի Պետրոսյան (անհայտ), Մաքսիմ Եղիշեի Գրիգորյան (անհայտ): Ադրբեջանցիները դաժանորեն են վարվել նաև մարտական գործողությունների ժամանակ զոհված ավետարանոցցիների աճյունների նկատմամբ: Նրանք երկար ժամանակ հրաժարվում էին աճյունները վերադարձնել, և միայն բանակցություններից հետո, հաջողվեց ստանալ աճյուններն ու հուղարկավորել: Ադրբեջանական զինված ուժերի կողմից Ավետարանոցում միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ են արձանագրվել նաև հոգևոր-մշակութային ոլորտում: Թշնամու վերահսկողության տակ է անցել Կուսանաց անապատի տարածքում տեղադրված՝ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանը: Այդտեղ կանգնեցվել է արցախյան առաջին պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան: Տելեգրամյան ալիքներում տեսագրություններ են շրջանառվում ադրբեջանցիների կողմից սրբավայրը պղծելու, տապանաքարերն ու եկեղեցու կահ-կարասին ջարդելու դրվագներով: Նման վանդալիզմը արժանի է միջազգային հանրության պարսավանքին, ինչը, կարծում ենք, չի ուշանա:

ԻԼՈՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Լրագր. 4-րդ կուրս